

# Էօզճան Ալփէրի ժապաւէնը «Աշուն», առաջին հանդիսացաւ

ՍԱՐԳԻՍ ՍԵՐՈՎՔԵԱՆ

Տարիներ առաջ, երտասարդ բեմադրիչ Էօզճան Ալփէրի 24 բոպէանոց «Մոմի» կարճամեթրաժէն սորված էինք, որ համշէնցիները Մեծմայրիկին Մոմի կ'ըսեն:

Համշէներէն լեզոտվ առաջին ժապաւէնին տաղանդատր բեմադրիչը Էօզճան Ալփէր այս անգամ համշէներէն, թրքերէն եւ վրացերէն լեզուներով պատրաստած եւ նախապէս «Աշնան Ողբ» անուանած նոր ժապաւէնով մասնակցեցաւ Ատանայի Քաղաքապետութեան կողմէ այս տարի 15-րդ անգամ կազմակերպուած «Ալթըն Գօզա» կինօժապաւէնի փառատօնին: Ալփէրի երկար ջանքերու արդիւնք այս գործը Ատանայի մրցանքի երկարամեթրաժ ազգային ժապաւէններու մէջ առաջին հանդիսացաւ «Սօնպահար» (Աշուն) անունով:

Լուրը երբ հասաւ, սրտագին շնորհատրեցիներ «Ակօս»ի վաղեմի բարեկամ սիրելի Էօզճան Ալփէրը եւ ամիս մը առաջ այս ժապաւէնի մասին մեր թրքերէն բաժնի աշխատակից Ֆունտա Թոսունի հետ կատարուած հարցազրոյցի իր խօսքերէն քաղուած փունջով փափաքեցանք մեր ընթերցողներուն ծանօթացնել Էօզճանն ու իր «Աշնան Ողբ»ը:

«Աշուն»

«Աշնան Ողբ» անունով պատրաստուած

ֆիլմին գլխատր հերոսը Եուսուֆ, 90-ական տարիներուն քաղաքական դէպքերու բերմամբ 12 տարի բանտարկութեան դատապարտուած ուսանող մըն է, որ բանտի պայմաններուն դէմ բողոքելու համար բանտարկեալներու ձեռնարկած հացադուլին կը մասնակցի: Թոքային հիւանդութեան պատճառաւ պատիժը կը ջնջուի եւ ազատ արձակուելով իր ծննդավայրը՝ Հօփա կը վերադառնայ: Իսկ ժապաւէնին գլխատր կին դերասանուհին՝ Էթա, Սովետական Միութեան փլուզումէն վերջ հարեան երկիրներու մէջ ապրուստ փնտրող եւ ժողովուրդին կողմէ «Նաթաշա» անուանուող պերճաղիճ մըն է: Ժապաւէնին մէջ Եուսուֆ իր մօրը հետ իր մայրենի համշէներէնով, իսկ Էթա տարեց վրացուհիի մը հետ վրացերէն կը խօսին:

«Լեզուները սերունդէ սերունդ կրողներն ու յարատեւութիւնը ապահովողները կիներն են» կ'ըսէ մրցանակատր Էօզճան Ալփէր եւ սապէս կը խորհրդածէ. - «Տղամարդիկ տնտեսական կամ այլ ընկերային ազդակներու բերմամբ դէպի դուրս կը բացփն, ուրիշ լեզուներու հետ կ'ընտելանան եւ իրենց մայրենի լեզուն ցուլումի կ'ենթարկուի: Բայց կիները աւելի փակ կեանք մը կ'ապրին, իրենց լեզուն ալ աւելի քիչ կը ձեւափոխուի: Երաժշտութեան համար ալ նոյնն է: Հայրս ոչ մէկ աւանդական երգ գիտէր: Բայց մայրս, արտին մէջ աշխատած միջոցին, կամ տան գործ մը ըրած ատեն դարեր



առաջուրնէ եկած երգ մը կը բռնեցներ: Այդ պատճառաւ լեզուներուն, ասանդութիւններուն եւ հաւատալիքներուն ճակատագիրը կիներուն կապուած է: Հիմա սակայն, համշէներէն խօսող վերջին սերունդն է, որ գոյութիւն ունի եւ երբ անոնք ալ մեռնին, այս լեզուն պիտի չքանայ, որովհետեւ այս տեսակ պատմական բարբառները խօսակցական լեզուներ ըլլալով գրատր աղբիւրներէ զուրկ են: Լեզուները որոնք հազարատր տարիներու մշակոյթներ կը խորհրդանշեն մեծապէս աղերսուած են մեր մեծմայրիկներուն կեանքին հետ: Մեր կողմերը, սեռովեան պոնտերէն, յունարէն, վրացերէն լեզուները դեռ մինչեւ այսօր կը խօսուին»: